Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11003/23-ԵՅՅ» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում ցերեկային կենտրոնում» |
| Դրամաշնորհի N | ԱՍՀՆ-ԴՄ-ՑԿՏԾ-23/5-1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2023- 31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2023-31.03.2023 |
| Ներկայացման օր | 11.04.2023 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Արթուր Թորոսյան, նախագահ |

## 2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային պլանով և հավելված 1-ով նախատեսված է եղել կատարել հետևյալ գործողությունները՝
1. Այցելուների ներգրավում և ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում
2. Կարիքների համակողմանի գնահատում և անհատական ծրագրի կազմում
3. Ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովում
4. Շարունակական կրթություն և ինքնուրույնության խթանում
5. Գլխուղեղի առողջության խթանում և պահպանում

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրում այցելուների ներգրավումն իրականացվել է Ասոցիացիայի և ՄՍԾ տարածքային կենտրոնների համագործակցությամբ: Ցերեկային կենտրոնի ծառայությունից օգտվել է 35 այցելու, որոնցից 25-ը՝ ՄՍԾ ուղեգրով՝ Երևանի տարբեր համայնքներից: Վերջիններիս հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր: Այցելուները կենտրոն են հաճախել շաբաթական հինգ օր՝ 2-5 ժամ տևողությամբ: Օրվա ընթացքում կազմակերպվել է սննդային ընդմիջում: Վերանայվել և նոր գործիքներով է համալրվել այցելուների առողջական վիճակի և կարիքների գնահատման անկետան: Այն գերոնտոլոգիական մասնագիտական հարցարաններից ու թեստերից բաղկացած հատուկ գործիք է, որը թույլ է տալիս օբյեկտիվ պատկերացում կազմել տարեց այցելուների կոգնիտիվ ստատուսի, հուզական վիճակի և կյանքի որակի մասին: Այցելուների

հետ աշխատանքն արտացոլվել է հետևյալ երեք հիմնական ուղղություններում՝ ա. ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովում, բ. շարունակական կրթություն և ինքնուրույնության խթանում, գ.գլխուղեղի առողջության խթանում և պահպանում: Այցելուները ներգրավվել են իրենց նախասիրություններին և հետաքրքրություններին համապատասխան զբաղմունքներում և առանձին խմբակներում: Շաբաթական մեկ անգամ գործել է նկարչության խմբակը, շախմատի խմբակը և ֆիլմասերների ակումբը: Յուրաքանչյուր օր կազմակերպվել է ֆիզիկական և գլխուղեղի առողջության խթանման հանդիպումներ՝ նախատեսված 3 անգամի փոխարեն, իրականացվել է 6 էքսկուրսիա՝ այց Երևանի թանգարաններ, ինչպես նաև շաբաթական 1 անգամ կազմակերպվել է հոգեբանական խմբային աշխատանք՝ արտթերապիա, վարժություններ՝ ուղղված խմբային համերաշխության ամրապնդմանը, ինքնագնահատականի խթանմանը, միմյանց հետ արդյունավետ հաղորդակցմանը, կոնֆլիկտների կառավարմանը և այլն: Այցելուների շարունակական կրթության և ինքնուրույնության խթանման նպատակով նախատեսված 3-ի փոխարեն կազմակերպվել է 6 սեմինար՝ առողջության, մեդիագրագիտության և իրավունքի ոլորտներին առնչվող թեմաներով: Կենտրոնի առօրյան, սակայն, չի սահմանափակվել միայն վերոնշյալ միջոցառումներով. կազմակերպվել են նաև միջմշակութային ճանաչմանը նպաստող հանդիպումներ Կենտրոնի արտասահմանցի կամավորների միջոցով, ինչպես նաև միջսերնդային հաղորդակցմանը նպաստող միջոցառումներ երեխաների և երիտասարդների մասնակցությամբ:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Ցերեկային կենտրոնի առօրյան լուսաբանվում է Ասոցիացիայի ֆեյսբուքյան էջում (https://www.facebook.com/ahaop) և կայքում (www.gerontology.am):

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն ծագել հաշվետու ժամանակահատվածում:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

- Ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովում
- Շարունակական կրթություն և ինքնուրույնության խթանում
- Գլխուղեղի առողջության խթանում և պահպանում

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվածից ավելի ինտենսիվ են կազմակերպվել ֆիզիկական և գլխուղեղի առողջության խթանման հանդիպումները և իրազեկիչ սեմինարները: Մեծացվել է երիտասարդ կամավորների ընդգրկվածության աստիճանը, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն ավելի բազմազան դարձնել այցելուների առօրյա զբաղմունքները, այլև նպաստել միջսերնդային փոխհասկացվածությանն ու արդյունավետ շփմանը: Ծրագրում ընդգրկվել են նաև հրավիրյալ մասնագետներ՝ լոգոպեդ, արտթերապևտ, մարզիչ՝ ֆիզիկական վարժությունների ուղղվածության:

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» հասարակական կազմակերպություն<br>Նախագահ ՝ Ա. Թորոսյան |
| --------------------------------------------<br>(ստորագրություն) | Digitally signed by GHAZAZYAN LIANA 6201810706<br>Date: 2023.04.11 17:39:38<br>--------------------------------------------<br>(ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |